

նյութերը բազմաթիվ թելերով կապված են տեղական նախորդ՝ բրոնզե դարի և վաղ երկաթի մշակույթների հետ, հանդիսանալով նրանց օրգանական շարունակությունը: Հասարակության վերնախավին վերաբերող նյութերը սերտորեն առնչվում են արեմենյան իրանի մշակույթի հետ:

Մի շարք փաստեր գալիս են բացահայտելու Հայաստանի և արևելյան Միջերկրականի երկրների, հունական աշխարհի, փոքր-ասիական երկրամասի միջև հիլենիստական ժամանակաշրջանում գոյություն ունեցող տնտեսական և մշակութային կապերը, որոնց սկզբնավորումը կարելի է դնել ուրարտական պետության գոյության տարիներին:

Այդ աղբյուրների հնարավորությունը հաստատող նյութերից են Արին-բերդում գտնված միլետյան դրամները, Աթենքում կտրված դրամը՝ գտնված Ջանգեզուրում, Հայաստանում հայտնաբերված բազմաթիվ սկարաբեաձև կնիքները, գեղարվեստական մետաղագործության որոշ նմուշներ, հոնիական խեցեգործության հետ առնչվող գունազարդ խեցեղենը, իջևանում պեղումների ընթացքում գտնված շենքի՝ հավանաբար տաճարի, պաշտամունքային նշանակություն ունեցող մոդելը, որը, հնարավոր է, արտացոլում է Հայաստանի՝ Փոքր Ասիայի ճարտարապետության հետ ունեցած որոշ առնչություններ:

Վերը բերված հնագիտական նյութերը հնարավորություն են տալիս նաև եզրակացնելու, որ վաղ հայկական մշակույթի ձևավորման գործում մեծ դեր են խաղացել ուրարտական ավանդները:

2. ՀԱՅԿԱԿԱՆ ԷՊՈՍԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՇԵՐՏԸ

Առասպելները: Հայ ժողովրդի հոգևոր մշակույթի կարևոր մասն են կազմում հնագույն առասպելները, որոնք մասամբ կապված են նաև հայոց սկրզբնական պատմության և կրոնի հետ:

«Հնաքույն բանաստեղծության մի տեսակն են և առասպելները: Դրանք փոքրիկ զրուցիկներ են, որոնց մեջ, ըստ նախնական աշխարհայեցողության ու հավատալիքների, բնությունն ու հասարակական ձևերը անգիտակցորեն մշակված են ժողովրդի երևակայությամբ: Դրանց մեջ ոգիների, դուցազների կամ աստվածների պատկերով ձևավորված ու դրոշմված են նախնական ժողովուրդների հայացքը, մի կողմից՝ հասարակական հարաբերությունների, մյուս կողմից՝ բնության ուժերի և երևույթների վրա»³⁵:

Հայերի հնագույն և ամենանշանավոր առասպելներից է Հայկի և Բելի զրույցը: Այն բերված է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Սեբեոսի «Պատմության»՝ Անանուն պատմիչին պատկանող ներածական գլխի մեջ և հիշատակվում է Անանիա Շիրակացու «Տիեզերագիտություն» և «Տոմարագիտություն» աշխատություններում:

Հայկը՝ մի հսկա աղեղնավոր, բմբուս և ազատասեր հերոս, չկամենալով հեթարկվել Բելին, որը փորձում է բռնանալ բոլորի վրա, իր որդիների հետ հեռանում և հաստատվում է Հայաստանում: Բելը նրան առաջարկում է վերադառնալ և հնազանդվել իրեն, սակայն Հայկը մերժում է: Այն ժամանակ Բելը

35 Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. I, Երևան, 1944, էջ 19:

արշավում է Հայկի դեմ, բայց ճակատամարտում սպանվում է Հայկի ձեռքով. որը այդպիսով իր անկախությունն է հաստատում:

Առասպելի հիմնական գծերից մեկը սեփական երկրի պաշտպանությունը և ազատագրումն է օտար ոտնձգություններից: Ճակատամարտի նախօրյակին դիմելով իր քաջերին, Հայկը ասում է. «Կամ մեռցուք և աղխ մեր ի ծառայութիւն Բելայ կայսցէ, կամ դաշողութիւն մատանց մերոյ ի նա ցուցեալ՝ ցրունացի ամբոխն, և մեք եղիցուք յաղթութիւն ստացեալք»³⁹: Հայկի և Բելի առասպելը որոշակի աղբրսներ ունի հայոց նախնական պատմության հետ: Հայկը հանդես է գալիս որպես հայերի էպոնիմ, որի անվան հետ է կապված հայ ժողովրդի անունը: Հայկի և Բելի առասպելի մեջ իրենց արտացոլումն են գտել պատմական այնպիսի եղևութություններ, ինչպիսին Ասորեստանի և Ուրարտուի դարավոր պայքարն էր կամ Հայկական լեռնաշխարհի բնակեցումը հայերի կողմից:

Մովսես Խորենացու մոտ բերված են զրույցներ նաև Արամի մասին: Նրանց մեջ առասպելականը նույնպես միախառնվում է պատմականի հետ: Արամի առասպելներում հեռավոր արձագանքներ են պահպանվել հայերի հարաբերությունների մասին իրենց սահմանակից երկրների՝ Մարաստանի, Ասորեստանի, Կապադովկիայի հետ: Ինքը՝ Արամը, հավանաբար մի կողմից արձագանք է ուրարտացիների թագավոր Արամի, մյուս կողմից՝ հանդես է գալիս որպես հայ ժողովրդի կազմավորմանը մասնակցած մյուս շերտի՝ փոյուզացիներին հարևան արմենների էպոնիմ:

Ասորեստանի դեմ Արամի կռիվ նկարագրության մեջ երևում է զրույցի առասպելական կողմը: Արամի հակառակորդը այստեղ Բարշամ աստվածն է («Բարշամին»՝ «երկնքի որդի»), որին պաշտում էին ասորիները: Առասպելական ընդգծված բնույթ ունի զրույցը նաև այն մասում, որտեղ նկարագրվում են Արամի գործերը Փոքր Ասիայում՝ Կապադովկիայում: Այստեղ նա ընդհարվում է Տիտանյանների և նրանց առաջնորդ «Պայապիս Քաաղեայ Տիտանեանի» հետ, որին հաղթելով քշում է «ի կղզին ինչ Ասիական ծովուն»: Զրույցի այս մասի նմանությունը հունական առասպելներին ակնհայտ է: Արամի վերահիշյալ ընդհարումները հիշեցնում են Զևսի՝ Տիտանյանների և Տիտան հսկայի դեմ մղված կռիվը, որը և թերևս վկայում է հնագույն ժամանակներում հայերի՝ փոքրասիական և հունական աշխարհների հետ ունեցած կուլտուր-պատմական աղբրսների մասին:

Տորքի առասպելի բովանդակությունը նույնպես հասել է մեզ Խորենացու «Հայոց պատմության» միջոցով: Նրան վերագրվում էր ֆիզիկական աներևակայելի ուժ: Տորքը ջարդ ու փշուր է անում հսկա ժայռեր, եղունգներով հղկում է քարերը, ինչպես և նրանց վրա փորագրություններ անում: Մովի ափերին նավերի հանդիպելով, նրանց վրա հսկա ժայռեր է նետում, և ալիքներից խորտակվում են նավերը:

Առասպելի այդ մասը որոշ չափով հիշեցնում է «Ողիսականի» կիկլոպ Պոլիփեմի արարքներն ու ևս մի ակնարկ է կուլտուր-պատմական որոշ հարակցումների՝ Հայաստանի և նրանից դեպի արևմուտք ընկած ժողովուրդների միջև: Սակայն ամբողջությամբ վերցրած, ինչպես նաև իր որոշ մանրամասնու-

³⁹ Խորենացի, Ա, Ժա:

թյուններով, Տորք Անդեղի առասպելը ունի տեղական բնույթ, կազմավորված լինելով Առաջավոր Ասիայի մշակութային ընդհանուր ատաղձի վրա:

Արայի և Շամիրամի հնագույն առասպելները մեծ հռչակ են վայելել հայերի մեջ: Նրանք մեղ հասել են բաղմաթիվ ճանապարհներով, մատենագրության միջնորդությամբ կամ ժողովրդական զրույցների ձևով:

Հիմնական առասպելը Շամիրամի և Արայի փոխհարաբերությունների մասին գեղեցիկ և ամբողջական ձևով պատմված է Մովսես Խորենացու և Սեբեոսի պատմություններում: Ասորեստանի թագուհի Շամիրամը սիրահարվում է Հայաստանի թագավորին՝ Արային, և առաջարկում նրան գալ իր մոտ և ապրել միասին: Արան մերժում է, իսկ Շամիրամը զորքով ներխուժում է Հայաստան, ճակատամարտում Արան սպանվում է:

Ըստ առասպելի նախնական ձևի, Շամիրամը վերակենդանացնում է Արային արալեզների օգնությամբ: Քրիստոնեության գաղափարախոսական բովոժանցած առասպելի այս վերջաբանը նենգափոխվում է և, ըստ նոր տարբերակի, Արայի դիակը նեխում է:

Այս առասպելը տարբեր ձևերով կամ նրա որոշ հատվածները կարելի է հանդիպել V—IV դարերի հեղինակ Կտեսիաս Կնիդացու մոտ՝ Դիոդոր Սիկիլիացու միջնորդությամբ, անտիկ ժամանակաշրջանի պապիրուսային մի սիրավեպում, Պլատոնի «Հանրապետություն» աշխատության մեջ և Մ. Խորենացու մոտ⁴⁰: Մինչև վերջերս հետաքրքրական տարբերակներ են պահպանվել ժողովրդական բանահյուսության մեջ: Շամիրամի անունը հանդիպում է Հայաստանի, առավելապես Վանի աշխարհագրական անվանումներով, օրինակ, Շամիրամի ջրանցքը, Շամիրամաթի վայրը և այլն: Ինչպես և մյուս առասպելները, շնայած իր դիցաբանական բնույթին, Արա Գեղեցիկի և Շամիրամի զրույցը արտացոլում է պատմական որոշակի հարաբերություններ՝ Հայկական լեռնաշխարհի հին բնակիչների և հարավից սահմանակից սեմական աշխարհի միջև:

Ասորեստանում մ. թ. ա. IX դարում իշխել է Շամուրամաթ թագուհին, որը Շամիրամի երկրային նախատիպն է: Սրա օրոք Ասորեստանի և նրա հյուսիսային հարևանի՝ Ուրարտուի միջև, մի շարք ընդհարումներ են եղել: Թեևս այս և հաջորդ դարերում չլադարող արշավանքների արձագանքներն իրենց տեղն են գտել Արայի և Շամիրամի առասպելների մեջ⁴¹:

Հին հայկական վեպը: Դի տարբերություն առասպելի, որը դիցաբանական բնավորություն ունի, վեպի նյութը պատմությունն է, իսկական թե կեղծ⁴²: Վեպի մեջ պահպանվում են պատմական անցքերի հուշերը, սակայն ժամանակագրական տեսակետից մեծ խախտումներով: Բայց հին վեպը իր հերթին առասպելախառն է, նրա մեջ տեղ են գտնում բաղմաթիվ առասպելներ:

Դարեր շարունակ ապրելով վիպասանների շուրթերին, վեպը զգալի փոփոխության է ենթարկվում: Այդ փոփոխություններն ուժեղանում են նշանավոր իրադարձությունների և պատմական անձերի ազդեցությամբ:

40 Տե՛ս Ն. Աղոնց, Հին հայոց աշխարհայացքը, Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 223—293:

41 Տե՛ս Գր. Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1943:

42 Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. I, էջ 37 և հաջ.:

Մեր հին վեպը կոչել են «վիպասանք», «երգ վիպասանաց» կամ «զրույց»։ Այն մշակվել է վիպասանների և գուսանների ձեռքով։

Տիգրանի և Աթաղահակի վեպը հնագույններից է։ Նրա մեջ արտացոլվել են տարբեր դեպքեր նաև Տիգրան Մեծի հետ կապված։ Բայց նախնական շերտը անդրապատկերում է մ. թ. ա. VI դարի դեպքերը, որոնց մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում Փսենոփոնը⁴³։ Ինչպես վերը տեսանք, ըստ նրա պատմածի՝ Մարաստանից կախյալ վիճակում գտնվող Հայաստանը ձգտում է անկախության։ Այդ ձգտումը ճնշում է Կյուրոսը, ապագա Աքեմենյան տերության հիմնադիրը, որը առժամանակ մարաց թագավորի զորավար է։ Հանդես է գալիս նաև հայոց արքայազն Տիգրանը, որը Կյուրոսի որսակիցն է և մտերիմ բարեկամը։ Խորենացու մոտ պահպանված վեպի հիմքը ևս երկու հարևան ազգերի թագավորների՝ հայոց Տիգրանի, մարաց Աթաղահակի (Աստիագես) և Կյուրոսի հարաբերություններն են։ Անվան զուգադիպության բերումով վեպի հետ է կապվել նաև Աթաղահակ (Աթի Դահակա՝ վիշապ Դահակա) վիշապի առասպելը։ Ըստ այդ պարսկա-հնդկական առասպելի, վիշապ Դահակը կռվում է հերոսների կամ աստվածների դեմ և սպանվում։ Մեր առասպելներում Աթաղահակի դեմ նախապես դուրս է գալիս, հավանաբար, Վահագնը, որին հետագայում փոխարինում է Տիգրանը⁴⁴։

Տիգրանը սկզբում դաշնակից է Աթաղահակին։ Բայց Կյուրոսի և Տիգրանի մտերմությունը փախցրել էր Աթաղահակի բունը և նա խորհրդակցում էր իր մարդկանց հետ, թե ինչ հնարքներով պիտի կարողանա խաբլել պարսիկներին և բյուրավոր զորք ունեցող հայերի դաշինքը, քանի որ այդ օրերում, պատմում է վեպը, Կյուրոսի և Տիգրանի դաշինքը փոքր վտանգ չէր սպառնում մարաց Աթաղահակին։

Առասպելախառն վիպասանությամբ է պատմվում Աթաղահակի երազի մասին, որի համաձայն արծվաթև վիշապի վրա նստած Տիգրանը սլանում է դեպի մարերի մայրաքաղաքը և սպանում Աթաղահակին։ Վախենալով, որ երազը կարող է իրականանալ, Աթաղահակը ամուսնանում է Տիգրանի քրոջ՝ Տիգրանուհու հետ, որպեսզի նրան իր գործակիցը դարձնի Տիգրանի դեմ։ Տիգրանուհին հայտնում է եղբորը Աթաղահակի դավադիր խորհուրդը, և հայոց արքան զորք է հավաքում ու շարժվում դեպի Մարաստան։ Պատերազմում Տիգրանը սպանում է Աթաղահակին ու հաղթանակ տանում։

Այսպիսով, Փսենոփոնի հետ մեկտեղ, հայկական առասպելախառն այս վեպը ևս, անշուշտ, պատմական կարգի հիշողություններ է հասցրել մեզ և՛ հայերի և՛ հարևան մարերի հարաբերությունների մասին։

Առասպելները և վիպական բանաստեղծությունը հին Հայաստանի մշակույթի անխզելի և արժեքավոր մասն են կազմում։ Նրանք անգնահատելի նշանակություն ունեն հին հայերի կրոնը, հավատալիքները, արվեստը, գրականությունը և պատմությունը ուսումնասիրելու համար։ Խոր արմատներով կապված լինելով հինարևելյան աշխարհայեցողության հետ և գրանորելով անզուգական

⁴³ Ss.² Xen., Cyrop., II, 9, 25.

⁴⁴ Խորենացի, Ա, Դ, Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. I, էջ 45.

գեղարվեստական հմայք, մեր հին առասպելներն իրենց առինքնող ուժի բերումով երբեմն տարածում են գտել նույնիսկ Հայկական լեռնաշխարհից դուրս:

Առասպելների և վեպի ոճը աչքի է ընկնում վառ գույներով, պատկերավոր դարձվածքներով, դիսյուսկ բնորոշումներով և մակդիրներով: Հակառակ քրիստոնեական ոգուն, հավասար շափով մեծ ուշադրություն է դարձվում հերոսների մարմնական և հոգեկան գեղեցկությանը:

Ըստ առասպելի, որը վերարտադրել է Մովսես Խորենացին, Հայկը «գեղապատշաճ է և անձնեայ, քաջազանգուր, խայտակն և հաստաբազուկ», Տիգրանը «երեսօք գունեան և մեղուական, անձնեայն և թիկնաւէտն, առգարարձն և գեղեցկոտն, պարկեշտն ի կերակուրս և իրմայելիս, և ի խրախճանութիւնս օրինաւոր. զորմէ ասէին ի հինսն մեր, որք փանդաւառն երգէին, լինել սմա և ի ցանկութիւնս մարմնոյ շափաւոր, մեծիմաստ և պերճաբան»: Հայ ժողովրդի գրական հուշարձանների միջով կարմիր թելի նման անցնում է հերոսների խորոխ և ազատասեր ոգին, օտար բռնապետությանը չհնազանդվելու վճռականությունը: Միևնույն ժամանակ ընդգծվում է նրանց խաղաղասեր շինարարական ոգին, որի արտահայտությունն են նրանց ձեռքով հիմնադրված քաղաքները, ավաններն ու դաստակերտները, տնկված անտառները:

3. ՀԱՅԵՐԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԸ

Ինչպես տեսանք, Հայաստանի պատմության տոհմա-ցեղային ժամանակաշրջանի կրոնի մեջ մեծ տեղ էր բռնում ոգու հավատքը, բնության և նախնիների պաշտամունքը: Տոհմատիրական կարգերի զարգացած փուլում և դասակարգային հասարակությանը անցնելու կապակցությամբ տեղի է ունենում աստվածությունների անձնավորում և ձևավորվում է հնագույն աստվածների պանթեոնը:

Վաղ հայկական պանթեոնի ուսումնասիրման համար արժեքավոր աղբյուր են հանդիսանում հին առասպելները, որոնք ունեն ընդգծված դիցաբանական բնույթ:

Հայերի հնագույն աստվածներից է Հայկը: Նրա պաշտամունքի արմատները մեզ տանում են դեպի տոհմատիրական հասարակության խորքերը: Ինչպես երևում է մի շարք փաստերից (Սեբեոսի (Անանունի) «Պատմությունը», Աղցի գամբարանի բարձրաբանդակները), Հայկը հանդես է գալիս որպես հսկա որսորդ, որն իր երկու շների հետ հալածում է գազաններին⁴⁵, Հայկը նաև կոսմոպոնիական հատկություններ է ձեռք բերում, երկինք է բարձրանում և դառնում գեղեցիկ ու լուսավոր աստղերից մեկը: Այդ երևում է մեր թարգմանական գրականության մի շարք երկերից և Աստվածաշնչից, որտեղ Հայկը հավասարեցվում է Օրիոն համաստեղությանը: Հայկական ժողովրդական երգերից մեկում մի համաստեղություն ուղղակի Հայկ (Խեկ) է անվանված:

Վաղ դասակարգային հասարակության անցման պայմաններում Հայկը մարմնավորում է հայ ժողովրդի պայքարը նոր հանդես եկող բռնապետության

⁴⁵ Տե՛ս Բ. Առաքելյան, Հայկ-Օրիոն, Տեղ. ԳԱՀՅ, № 8, 1941, էջ 29—36: